

Ապրիլ 24-ի առիթով «Արարատ» լոյս պիտի չտեսնէ վաղը՝

Շաբաթ, 25 Ապրիլ 2009-ին:

Մեր յաջորդ թիւը՝ Կիրակի, 26 Ապրիլ 2009-ին:

### ԽՄԱԳՐԱԿԱՆ

# ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԳԱՐՀՈՎ ՊԻՏԻ ՀԱՄՆԻՆՔ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԻՏԷԱԼՆԵՐՈՒՆ


Այսօր հայ ժողովուրդը կ'ոգեկոչէ պատմութեան ամենատխուր մէկ իրադարձութեան 94-ամեակը: 3-րդ Յեղասպանութեան 94-ամեակի ոգեկոչումները առիթներ են յառաջդնէ մարդկութեան յիշեցնելու, թէ հակառակ բազմապիսի ճնշումներու հայ ժողովուրդը պիտի շարունակէ արդարութեան վերականգնման ու պատմական ճշմարտութեան բացայայտման իր պայքարը: Ո՛չ արհեստագիտական նորարարութիւնները, ոչ ալ ժամանակի հեռաւորութիւնը կրնան մոռացութեան մատնել պատմական այն յիշողութիւնը, զոր կ'ապրինք ազգովին: Ընդհակառակը, Մեծ Եղեռնի 94-ամեակը խորհուրդի այն պահն է, որ հայ քաղաքական հոսանքները՝ պետականութիւնը պիտի միաւորէ, նախ՝ հանրագումարի բերելու ցարդ կատարուած աշխատանքները, ապա՝ հունաւորելու պահանջատիրութեան ուխտը, մինչեւ ճանաչումը մարդկութեան ճակատին խարանուած 3-րդ հայկական Յեղասպանութեան: Գիտենք, որ Յեղասպանութեան իրողութիւնը միջ-պետական փոխ յարաբերութիւններու մէջ կ'օգտագործուի իբրեւ ճշմարիտ խաղաքարտ: Գիտենք, որ սփիւռքահայ առօրեային մէջ ծլած վերջերը մեզ կը դնեն լուրջ փորձահարաւերներու առջեւ: Գիտենք, որ 3-րդ Յեղասպանութեան մէջ գաղտնի մասնակցութիւն ունեցած մութ ուժեր նոյնիսկ ներհայկական բեմի վրայ կը փորձեն ջլատել մեզ, սակայն գիտենք նաեւ, որ պատմական ճշմարտութիւնը դուրս եկած է պատմաբաններու դաշտէն, հասած է քաղաքական ու դիւանագիտական դաշտ: Աւելի քան 16 պետութիւններ ճանչցած են Յեղասպանութիւնը: Այս բոլոր մարտահրաւերներուն դէմ հայ ժողովուրդը իր պահանջատիրական ուղին պիտի շարունակէ տակաւ համակարգուած, աւելի վճռական, բայց մանաւանդ՝ շրջահայեաց ու հետեւողական կերպով:

Թուրքիոյ քաղաքական շրջանակները գիտակցելով մեղակցութեան իրենց բաժինին, կը զգան թէ 1915-ի եղեռնագործութիւնը քողարկելու իրենց երկարամեայ ճիգերը ի վերջոյ պիտի բախին ձախողութեան, որովհետեւ անխուսափելի փաստերու առկայութեան ժխտումի անոնց դիրքերը օրէ օր սկսած են սպառիլ: Թուրքիա կ'անգիտանայ, որ հայ ժողովուրդին անյարիր են պարտուողականութիւնն ու նահանջը: Թուրքիա կ'անգիտանայ, որ անապատներու քամիին տակէն փինիկացած, վերապրող հայը մնաց յանձնառու իր նահատակներուն պատգամին, մնաց հաւատարիմ իր սուրբ առաքելութեան, հասնելու հոն՝ ուր նոյնիսկ թրջական իշխանութիւններու մարտավարական խուսանաւումները անգոր պիտի դառնան ծածկելու պատմական ճշմարտութիւնը: 3-րդ Յեղասպանութեան ճանաչումը դուրս եկած է լոգուկներու եւ յիշատակումներու ծիրէն՝ Թուրքիան դէմ յանդիման դնելով պատմութիւնը վերագնահատելու եւ պատմական իրողութիւնները ընդունելու ստիպողութեան տակ: Դէպի մարդկային ընկերութիւն մերուելու եւ հայ-թրքական փոխ յարաբերութիւններու մեկնակետ պիտի դառնայ այն օրը, երբ թրջական իշխանութիւնները խոստովանին պատմական ճշմարտութիւնը, ճանչնան մոռացութեան ու խեղաթիւրման մէջ պարուրուած մեր ժողովուրդի տարածքային եւ նիւթական պահանջները: 3-րդ հայկական պահանջատիրութիւնը իրենց քաղաքական շահարկումներուն խաղաքարտ ծառայեցող պետութիւններ պետք է գիտնան, որ Յեղասպանութեան

ճանաչումը բաւարար չէ հայ ժողովուրդին: Ոմանք ի գուր կը փորձեն պատմական տարածքներու պահանջը փոխարինել լոկ ճանաչման պահանջով:

Մեր պահանջատիրութիւնը ճանաչումին զուգահեռ կ'ընդգրկէ տարածքային եւ նիւթաբարոյական հատուցում եւ, ամենակարեւորը, այժմու 3-րդ հայաստանի անապատութեան երաշխիքներ:

Դժբախտաբար, պատճառներ ունին մտահոգութիւն յայտնելու, թէ ըսկներու ետին ոմանք կրնան



մինչեւ իսկ ծուղակի վերածել Յեղասպանութեան ճանաչումը՝ հրաժարելով տարածքային պահանջներէն:

Մեծ Եղեռնի ոգեկոչման 94-րդ տարին անհրաժեշտ է վերաբժենալ մեր դիրքերը: Վերատեսութեան ենթարկել ճանաչման վերաբերեալ մեր շեշտադրումը: Գնահատելու բաւարար է ամբողջով հայ ժողովուրդին հոգեվիճակը: Ո՛վ պիտի երաշխաւորէ որ Թուրքիա հրաժարուի փան-թուրանական իր նկրտումներէն: Գնահատելու իրողութեան զուգահեռ նոյնքան կենսական է մեր հայրենիքի անվտանգութիւնը: Այս իսկ պատճառաւ ճանաչման օրակարգին վրայ պիտի դնենք տարածքային ու տնտեսական հատուցման խնդիրները:

Մեծ Եղեռնի 94-ամեակը միաժամանակ առիթ է վերատեսութեան ենթարկելու մեր ազգային, հայրենական իրականութեան մէջ կոտորակող դառնութիւնները: 3-րդ հայկական գետնի վրայ կը գիտակցինք, թէ 3-րդ հայաստան իբրեւ Կովկասի անդամ պետութիւն դարձած է Արեւմուտքի երկարաժամկետ քաղաքական ծրագիրներուն սեւեռակետ: Ժողովրդավարական հիմնական չափանիշներու կիրառման տեսանկիւնէն, չենք կրնար անտարբեր մնալ ընկերային արդարութեան, արտագաղթի, փտածութեան, դիւ-

նակալութեան, իրաւապահական մարմիններու կամայականութիւններուն հանդէպ հայրենի ժողովուրդին բողոքներուն, փոփոխութեան պահանջներուն: Միւս կողմէ, ինչպիսին ալ ըլլայ հայրենիքի ընկերային, քաղաքական իրավիճակը, դատապարտելի կը գտնենք տիրող խորթ երեւոյթները արտաքին ուժերու գորակցութեամբ վերանայելու ոմանց միտումները: 3-րդ ժողովուրդը, ինչպէս տարբեր ազգեր, պիտի ունենայ կամ աւելի ճիշդը՝ պիտի ստեղծէ իր ազգային անվտանգութեան հայեցակետը: Մեր նպատակը պիտի ըլլայ ստեղծել ժողովրդավարական այնպիսի համակարգ, որ ծառայէ իբրեւ հայ ժողովուրդի պատմա-քաղաքական, ազգային, մշակութային արժեքներու եւ իրաւունքներու պահպանութեան խորհրդակիշ:

Սփիւռքի պարագային, կ'ըմբռնենք սփիւռքահայ իրաքանչիւր գաղութի առանձնայատկութիւնները, սակայն 21-րդ դարը եւ յատկապէս հայապահպանումն ու 3-րդ Յեղասպանութեան ճանաչումը հետապնդող աշխատանքները մեզմէ կը պահանջեն գիտական, առարկայական նոր մօտեցումներ: Նմանօրինակ նուիրական ու վեհ առաքելութեան մը յաջողութեան գրաւականը հաւաքական աշխատանքն է: Ուստի անհրաժեշտ կը գտնենք սփիւռքահայութեան գործունեութիւնը հունաւորող տան Արտաքին յարաբերութեանց յանձնախումբին կողմէ վաերացուցելու եւ ապահովելու էր նախագահ Պարապ Օպամայի, փոխնախագահ Շոթէֆ Պայտրնի ու արտաքին գործոց նախարար Հիլըրի Գլինքի աջակցութիւնը:

Լիբանանահայութիւնը հանդիսաւորապէս կը նախապատրաստուի ոգեկոչելու Մեծ Եղեռնի 94-ամեակը: Մեր պահանջն է, որ 3-րդ հայրենիքի ու պահանջատիրութեան հետապնդման քայլերը յետայսու ծաւալին Կեդրոնական Մարմնի մը հովանաւորութեան տակ, որ իր անմիջական դրական արտայայտութիւնը պիտի ունենայ այլ գաղութներու վրայ եւս:

Յամահայկական պահանջատիրութեան 3-րդ հայրենիքի Ուխտի այս օրը, հայ ժողովուրդը կ'ուխտէ շարունակել պայքարը մինչեւ քանզի լռութեան պատը: 3-րդ հայկական Յեղասպանութեան 94-ամեակի խոհանքն այս օրերուն մեր ժողովուրդը պիտի վճռէ ուժեղացնել իր ներքին միասնականութիւնը: Միասնականութեան եւ փոխադարձ հանդուրժողութեան խորհուրդին գիտակցութեամբ կը խոնարհինք Մեծ Եղեռնի թիրաւոր նահատակներու յիշատակին առջեւ եւ կ'ուխտենք 3-րդ հայաստան եւ Սփիւռք մնալ պատմա-մշակութային միասնական եւ համադրուած քայլերով հետապնդելու պահանջատիրական երթը: Բաւ է ցաւ ու սորմոց: Պահանջատիրական երթը պիտի մնայ վառ ու անկուն, գերիվեր բոլոր հատուածական շահերէ: Միասնականութեան լուսաւոր ճանապարհով պայմանաւորուած է մեր ազգային խեղճներուն հասնելու գրաւականը: Այս կը վկայէ մեր պատմութիւնն ամբողջ, այս է վճիռը հայրութեան, այս պիտի ըլլայ մեր ազգային հաւատամքը անսասան:

Այսօր՝ խունկ ու աղօթք Մեծ Եղեռնի անմահ նահատակներուն:

Այսօր՝ կամք ու կորով մեր նորահաս սերունդներուն: Այսօր՝ ուխտի օր դէպի ամբողջական 3-րդ հայաստան:

**ՀԱՅԿԱԿԱՆ  
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ  
ԲԱՆԱՅԵԼ  
ՀՈՎԱՆԱԻՐՈՂՆԵՐՈՒՆ  
ԹԻՒ 100-Ը Կ'ԱՆՅՆԻ**

Հայկական Յեղասպանութեան ճանաչումը պահանջող գոնկրեսական նորագոյն բանաձեւը արդէն իսկ ապահոված է 100-է աւելի հովանաւորներ՝ քաղաքական գլխաւոր երկու կուսակցութիւններէն:

Մարտ 17-ին գոնկրեսականներ Էտըմ Շիֆի, Շորճ Ռատանովիչի, Ֆրէմք Փրընքի եւ Մարք Քրըքի կողմէ Ներկայացուցիչներու տան Արտաքին յարաբերութեանց յանձնախումբին ներկայացուցած այս բանաձեւը կոչ կ'ընէ Միացեալ Նահանգներու նախագահին, որ յստակօրէն հաստատուի Հայկական Յեղասպանութեան իրողութիւնը:

Բանաձեւը կրկնօրինակն է նախորդ գոնկրեսի ներկայացուցած այն բանաձեւին, որ Ներկայացուցիչներու տան Արտաքին յարաբերութեանց յանձնախումբին կողմէ վաերացուցելու եւ ապահովելու էր նախագահ Պարապ Օպամայի, փոխնախագահ Շոթէֆ Պայտրնի ու արտաքին գործոց նախարար Հիլըրի Գլինքի աջակցութիւնը:

**ԸՆԴՀԱՆՈՒՄԻՅԵՆ ԿԸ  
ԲՈՂՈՔԷ ԶԱՂԱՔԱՊԵՏԻ  
ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ  
ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՅԻՆ ԴԷՄ**

Ընդդիմութեան ներկայացուցիչները հակառակմանդրական եւ հակաօրինական որակած են Երեւանի քաղաքապետի ընտրութիւններու ժամանակացուցով ամբազրուած այն հանգամանքը, ըստ որում, քուէարկելու իրաւունք պիտի ունենայ նաեւ մայրաքաղաքի որեւէ համայնքի բնակիչ, նոյնիսկ եթէ մէկ տարուան բնակութիւն չէ հաստատած այնտեղ չէ ընդգրկուած տեղւոյն ցուցակներուն մէջ:

Կերտնական ընտրական յանձնախումբի նախագահ Գարեգին Ազարեան «Ազատութիւն» ռատիօկայանին տուած գրոյցի մը ընթացքին անհիմն նկատեց ընդդիմադիրներու յայտարարութիւնները, յիշեցնելով, որ օրէնդրական դաշտը նոյնն է եւ ոչինչ փոխուած է:



## ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 94-ԱՄԵԱԿԻ Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ո Ք Ե Կ Ո Չ Ո Ւ Մ

**Պատգամախօս՝ ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆ**  
(3-րդ հայաստանի արտաքին գործոց նախկին նախարար)

**ԳԵՂԱՐՈՒԹԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ՝ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԵ ԵՒ ԿԱՏԱՐՈՂՈՒԹԵԱՄԵ  
ԼԻԲԱՆԱՆԻ ՄՇԱԿՈՒԹՎՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ**

**24 Ապրիլ 2009, Երեւոյեան ժամը 8:30-ին, «Ըսիլ ԼսչոՒՄ» ՀԱՆՈՒՍԱՍՐԱՅԻՆ ՄԵԶ, ՏԵՊՊՈՅԷ:**

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՔԵԿՈՉՄԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ